ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՄԵՐ «ԱԽՊԱՐՆԵՐԸ» ԿԱՄ ԵՐԹԱԼԸ ՃԻՇՏ Է...

ԵՐԵՎԱՆ

ԱՐՄԱՎԻՐ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2017

ՀՏԴ 821.19-3 Իսահակյան
ԳՄԴ (5Հ)-4
Ի 755

Խմբագիր՝ Վարդան Դևրիկյան

Իսահակյան Ա.
Ի 755 Մեր «ախպարները» կամ երթալը ճի՞շտ է / Ա. Իսահակյան. - Եր.: Արմավ, 2017. - 84 էջ:

ՀՏԴ 821.19-3 Իսահակյան
ԳՄԴ (5Հ)-4

ISBN 978-9939-863-51-1

© Իսահակյան Ավիկ, 2017
© Արմավ, 2017

«ԵՐԹԱԼՈՒ» ՀԱՐՑԸ ԵՐԲ ՎԵՐԱԾՎՈՒՄ Է ՄՆԱԼՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ

Այս գրքում ներկայացվում են իրար միահյուսված և մի ամբողջություն կազմող երկու գործեր: Երկուսն էլ հուշագրություն են կամ ավելի ճիշտ հետադարձ հայացք նախորդ տասնամյակների Երևանին և վերջինիս մի յուրահատուկ փայլ հաղորդած հայրենադարձներին:

Մասնավորից ընդհանրացմանը գնալով առանձին հայրենադարձների և նրանց ընտանիքների միջոցով ներկայացվում է հայրենադարձության ընթացքը, նրանց կենցաղային մշակույթը, արևմտահայ աշխարհից տարբեր երկրների հետ միախառնված և ապա հայրենիք բերված կենսակերպը և վերջինիս հարմարեցումը հայաստանյան պայմաններին:

Հուշագրությունը ընթերցողին փոխադրում է 1940-50-ական թվականները, երբ Երևանում իրենց տոկուն աշխատանքով հիմնավորվեցին ու ոտքի կանգնեցին նրանք:

Այնքան պատկերավոր և մանրամասն է ներկայացված հայրենադարձների կյանքը և գործունեությունը, որ զգում ես, թե այդ մարդկանց համար իրենց արհեստը և ընդհանրապես արհեստավոր լինելը կեցության ձև էր դարձել, բարձրացել կենցաղային մշակույթի աստիճանի:

Ցույց է տրվում ինչպես հին Երևանին հաղորդվեց եվրոպական և ընդհանրապես արևմտյան մշակույթի շունչը: Թե 1960-80-ական թթ. այդ ամենը որակական ինչ նոր աստիճանի էր բարձրանալու և հետո ինչ նոր արդյունքներ էր տալու, եթե 1980-ական թվականների վերջից չսկսվեր արտագաղթի ալիքը և ինչպես Իսահակյանն է դիպուկ ձևով նկատում, «Մեր ախպարները» իրենց ձևավորած քաղաքային մշակույթը, անգամ տնաշինության

ավանդները չփոխադրեին օվկիանոսից այն կողմ: 1940-ական թվականների վերջից իրենց կղզյակները ստեղծելով Երևանի մի շարք թաղամասերում, դրանք հետո որպես հավաքական ամբողջություն իրենց հետ տանելու էին Լոս-Անջելես:

Երկու գործերն էլ ներկայացնում են Երևանի հուշագրական ձևով գրված նախորդ տասնամյակների պատմությունը, ազգային հոգեբանության տարբեր գծերի խորը դիտողականությամբ և վերհանմամբ:

Ողջ գործը գրված է հուշագրությանը բնորոշ մեղմ և լուսավոր թախիծով, որպես ետադարձ հայացք մեր ապրած կյանքին: Հուշագրությունը բնականաբար պետք է գրված լինի առաջին դեմքով, պատմողի կողմից: Իսահակյանը ևս գրում է առաջին դեմքով, բայց ոչ իր մասին, այլ դիմացիների: Որպես մի ուղեկցող, նա մեզ տանում է հայրենադարձների թաղամասերով, պատանեկան ու երիտասարդական տարիների վերհուշներով ներս մտնում նրանց տները, ապա ուղեկցում քաղաքային կյանքի միջավայրը՝ հասնելով մինչև «Արմենիա» հյուրանոցի հյուրասրահը, որը ժամանակի հայ երևելիներով նա քանիցս պատկերել է իր համաբնույթ մյուս գործերում ևս:

Պատումն այնքան կենդանի և անմիջական է, որ ընթերցողին թվում է, թե ինքը ևս այդ նույն միջավայրն է փոխադրվել: Մի անմիջականություն, որը հուզում է ոչ միայն հեռավոր ափերում գտնվողներին, այլև որպես մեր ապրած ժամանակի վերհառնումը նաև երևանյան ընթերցողին է հուզում:

Այն համախմբող դեր կունենա Լոս Անջելեսում գտնվող նախկին երևանցիների համար, որ ընթերցելով այս գիրքը մեկ անգամ ևս վերհիշեն իրենց ապրած Երևանը, որն վստահաբար ազգային իմաստավորում է հաղորդում աշխարհի տարբեր օվկիանոսների ու ծովերի ափերին գտնվող երկրներում ապրող հայությանը:

Լինելով նախորդ տասնամյակներին վերաբերվող հուշագրություն, այն սակայն մեր ներկայի ու ապագայի հետ կապված մի շատ կարևոր հարցադրում է առաջ քաշում: Ինչու հայը ավանդաբար իրեն ավելի պաշտպանված է զգում հայրենիքից դուրս, օտար միջավայրում է կարողանում դրսևորել իր ստեղծագործա-

կան ու գործարար ձիրքերը: Ո՞րն է պատճառը՝ մեր աշխարհագրական դի՞րքը, պատերազմական իրավիճա՞կը թե՛ մեր կյանքում պետք է փնտրենք այս հարցի պատասխանը:

Հետևելով հայրենադարձների ու նրանց ժառանգների եղեռնից վերապրելով տարբեր երկրներում հաստատվելուն, ապա և հայրենիք գալուն և հիմա դարձյալ օտար երկրներում հաստատվելուն ու այնտեղ բարեկեցիկ կյանքով ապրելուն և որոշակի դիրքի հասնելուն, նույն այս հարցադրմամբ մի կողմից հպարտությամբ ես լցվում հայկական կենսունակության, դժվարությունների հանդեպ չընկրկելու առջև, բայց և միաժամանակ ցավով մտածում, թե նրանք ինչո՞ւ պետք է հեռանային մեր երկրից, ուր իրականացավ սերունդների երազանքը Անկախ Հայաստանի վերստեղծմամբ:

Երբ քննում ես բոլոր այս հարցերը, վերստին ծագում է «երթալը ձի՞շտ է» հարցադրումը:

Իսահակյանի պատումը սակայն այն կարևոր արժանիքն ունի, որ ընթերցելով օտար ափերում վերահաստատված մեր հայրենակիցների մասին պատմությունները, ոչ թե ձգտում ես նրանց միանալ և նույն բարեկեցիկ կյանքով ապրել, այլ հակառակը՝ զգում ես ժամապահի ու դիրքապահի մնացողի քո պարտավորվածությունը: Ավելի ես կապվում մեր երկրին ու քաղաքամայր Երևանին, ինչպես որ դիրքերում գտնվող զինվորները դիրքային հերթապահության ձմեռային սառնաշունչ գիշերներին ոչ թե մտածում են դիրքերը թողածի ետևից իրենք էլ գնան ու իրենց բնակարաններում տաք թեյ խմեն, այլ գիշերային հերաթապահության ժամերն են վերաբաժանում իրենց վրա, որ գնացողի տեղը ևս հերթապահեն ու այն դատարկ չմնա:

Ինչպես որ տարիներ հետո հանդիպելով նման որևէ հեռացածի ոչ թե ամոթանք ես տալիս իրենց պատճառով հերթապահության ավելացած ժամերի համար, այլ հիշում մինչ այդ միասին անցկացրած հերթապահության օրերը, այնպես և մենք ենք դիմավորում և պետք է դիմավորենք որպես զբոսաշրջիկ կամ երկքաղաքացի Երևան եկող նախկին երևանցիներին, որպես մեր ժո-

ղովրդի զավակների և վերջապես որպես այն մարդկանց, որոնց ջանքերով է նաև կերտվել այսօր մեզ ի պահ տրված համայն հայության մայրաքաղաքը:

Հուշագրությունն ավարտվում է ժամանակային ու պատկերային առումով խորհրդանշական ու ցնցող մի պատկերով՝ 2016 թ. ապրիլի երկուսի երևանյան առավոտով, երբ պատերազմի բոթը Իսահակյանի բնորոշմամբ, ինչպես և 1941 և 1991 թթ. վերստին տարածվելու էր և նոսրացած թվացող քաղաքից մարդկային բազմությունը վարար գետի նման ելնելու էր ի պաշտպանություն Արցախի:

Վերջին այս խորհրդանշական պատկերը տալիս է նաև գրքի վերնագրի, որպես ենթավերնագիր հնչող «երթալը ձի՞շտ է...» հարցադրման պատասխանը՝ «Ճիշտը մնալն է...», կամ պետք է մնալ:

Որ մենք իրավունք չունենք գնալու, դատապարտված ենք մնալու և մեր երկիրը մեր ժողովրդին արժանի պետության վերածելու և այն պաշտպանելու մեր իսկ կյանքի գնով:

Գոնե ես այսպես եմ ընկալում գրքի վերնագրի հարցականը և հարցումը, որն օրեցօր դժբախտաբար գնալով ավելի ու ավելի ուժեղ է արձագանքում մեր կյանքում, բայց և որին պետք է հաջորդի «Ճիշտը մնալն է և մեր կյանքն ու երկիրը վերափոխելը» պատասխանը:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ՄԵՐ «ԱԽՊԱՐՆԵՐԸ»

Նվիրում եմ Պերճ Զեյթունցյանին

Հիմա նրանցից Երևանում համարյա ոչ ոք չի մնացել: Մնացածներն էլ երևանցի են դարձել, իսկ մեծ մասը ետ գնաց այնտեղ, որտեղից որ եկել էին:

Առաջինը, շնորհիվ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Պինոյի, սկսեցին ետ գնալ ֆրանսահայերը: Այդ նրանք էին, որ միապետության պատմության մեջ առաջիններից մեկը ցույց կազմակերպեցին Թումանյանի թանգարանի սանդուղքների տակ: Պինոն ինչ-որ մի ձևով իմացել էր կազմակերպվելիք ակցիայի մասին, և մեքենայով ճիշտ ժամին եկել էր ցույցն անձամբ տեսներ, իմանար, թե ինչ է կատարվում: Պինոն իջել էր մեքենայից, իսկ նախկին ֆրանսահայերը, հիմնականում կանայք, իրենց մանուկներին գլուխներից վեր բռնած գոռացել էին՝ «Փարիզ ենք ուզում, մեր տունն ենք ուզում»: Եվ Պինոն հասկացել էր, որ ինչ-որ բան այնպես չէր արևոտ Երևանում: Իսկ նրա դիմումին Երևանի վերևներում ասել էին՝ մենք անկարող ենք երկրից այսքան մարդու դուրս գալը կազմակերպել, Մոսկվան պիտի որոշի: Եվ Պինոն դիմեց Խրուշչովին, նրան հանձնելով ֆրանսահայերի դիմումները: Ընդամենը մի քանի տարի առաջ բոլոր այս մարդիկ կհայտնվեին Սիբիրում, սակայն «ձնհալի» հեղինակը հանեց իր գրիչը և թույլտվություն մակագրեց: Դա 1962 թվին էր, իսկ 1964-ին Խրուշչովին հանեցին, սակայն «Ելքը Եգիպտոսից» արդեն սկսվել էր: «Վիվ լա Խրուշչով», «Պինոն ապրած կենա»: Բայց հենց Պինոն հիմքը դրեց այն գործի, որ Երևանը սկսեց դատարկվել մեր «ախպարներից»:

Միշտ մաքուր, ճաշակով հագնված, տղամարդիկ՝ հաճախ ֆետրե շլյապայով և ճիշտ կապած փողկապով, կանայք՝ բարետես, կանացի, գեղեցիկ հագնված, ամառները զոնտիկով և ձեռքին գեղեցիկ հովհար, ունեին դեմքին օտարերկրացու կնիք: Մեր «ախպարները» սափրված էին, արևի ակնոց էին դնում, արևածաղիկ չէին չրթում, բաժակ-բաժակի ետևից գարեջուր չէին խմում և չէին հայհոյում տեղի թե անտեղի: Նրանք դիմում էին մարդկանց եղբայր բառով, սակայն այդ բառը նրանց առոգանությամբ ստացվում էր «ախպար» և, ինչպես լինում է առօրյա կյան-

քում, այդ բառը կպավ մեր հայրենադարձներին, հետզհետե դառնալով հավաքական պիտակ: Երբ գնում էին, արդեն բավական ապահով կենցաղի տեր էին դարձել: Բայց ինչե՜ր քաշեցին, մինչև այդ վիճակին հասան:

Հակիրճ պատմեմ իմ հիշածը: Չորս թե հինգ տարեկան էի, մի օր, առավոտ վաղ, մեր տուն զանգահարեցին Կենտկոմից: Բաղրամյան փողոցի վերին հատվածում, բլուրներին, ուր արդեն մի քանի ամիս է հայրենադարձները ապրում էին վրանների տակ, իսկ դիմացը խստաշունչ ձմեռն էր, և մարդկանց ոչ մի հանգրվան, էլ ուր մնաց բնակարան չէին տալիս, փոխարենն առաջարկում էին բնակության գնալ Հայաստանի այլ վայրեր, իսկ նախօրոք Երևանում էին խոստացել: Բնականաբար, մարդիկ հավաքվել և բողոքի ձայն էին բարձրացրել, և ահա Կենտկոմից խնդրում են Վարպետին՝ հանդիպել մեր հայրենադարձների հետ, մեղմացնել կրքերը, համոզել, որ մի քիչ էլ համբերեն, և վերջը կստանան ապրելու իրենց տեղերը: Հանդիպումը շատ ծանր էր եղել, սակայն արդյունքում ոչ թե բնակարան տվեցին, այլ՝ հողամասեր, որտեղ մեր եկվորները պետք է իրենք իրենց տները կառուցեին: Եվ այսպես Երևանում գոյացան «ախպարական թաղեր», որոնք կոչվում էին Արևմտյան Հայաստանի շրջանների անուններով՝ Կիլիկիա, Կամարակ, Կիրզա, Արաբկիր, Բյութանիա, Զեյթուն, Սեբաստիա, Մալաթիա, Արեշ, քիչ չէին ներգաղթածները նաև Շիլաչիում...

Մարդիկ գիտեին, թե չգիտեին, պետք է իրենք իրենց տները կառուցեին, և արդյունքում թվածս թաղամասերում գոյացան հիմնականում մեկ հարկանի շենքեր՝ կառուցած առանց որևէ ճարտարապետական նախագծի: Ում խելքն ինչպես փչել էր, այդպես էլ կառուցել էին: Ավելի ճիշտ՝ ով ինչ հնարավորություն ունեցել էր, դրան համապատասխան կառուցել էր, իհարկե թույլ տվածի սահմաններում:

Զբոսնենք նախկին «ախպարական թաղերով». ի՜նչ ոճի ու բնույթի կառույցի չես հանդիպի, որոշ մարդիկ նաև երկրորդ հարկ կամ ձեղնահարկ էին կառուցել, այդ 40-ականներին կառուցած տների տերերը հետո էլ մի 40 տարի վերանորոգել են, որ կարգի բերեն, որ հետո 80-90-ական թվականներին թողնեն գնան...

Միացյալ Նահանգներում, հիմնականում Կալիֆոռնիայում, նրանք, տեղի մասշտաբով, արդեն ուրիշ հնարավորություններ ունեցան, բայց

էլի նույն տրամաբանությամբ կառուցեցին իրենց տները, մեկ, իսկ առավել դեպքում՝ երկու հարկ, ներքին բակ, ավտոտնակ, խոհանոցը առանձին, քիչ թե շատ ընդարձակ հյուրասենյակ-ճաշասենյակ, երկու կամ երեք ննջասենյակ, և եթե հիշածս երևանյան թաղամասում «պետքարանը» հիմնականում բակում էր, ապա գլենդելյան տարբերակում շենքը ուներ այնքան «պետքարան», որքան ննջասենյակ: Խորհրդային կառավարության տված հողակտորները երկու-երեք հարյուր քառակուսի մետրից ավել չէին, որպես օրենք, այնպես որ, տները քիփ-քիփ իրար կպած էին, բնականաբար հարևաններն էլ իրար մոտ էին:

Մեր հայրենադարձները իրենց հետ Երևան բերեցին և՛ նոր ճաշատեսակներ, և՛ կենցաղի որոշ ձևեր: Դրանցից հիմնականը սև սուրճն էր: Վստահաբար կարող եմ ասել, որ մինչև մեր «ախպարների» գալը Երևանում սուրճ չէին խմում: Հիմա դժվար է ասել, թե ում մտքով էր անցել Հայաստան գալիս հետը սուրճ բերել, բայց դա հաստատ իմաստուն որոշում է եղել: Սուրճը, որ Մերձավոր Արևելքի երկրների թագավոր խմիչքն էր, հետզհետե դեռևս առաջին ալիքի եկվորների հետ մտավ երևանյան կենցաղ: Երևանցիները զարմացած էին՝ այդ ի՞նչ մատնոցաչափ բաժակներով, սև գույնի ու դառը համի, անպայման եռացրած վիճակում մի հեղուկ են օգտագործում մեր «ախպարները»: Եվ եթե իրերի բերումով իրենց մոտ հյուր ես գնացել կամ պարզապես մեկ-երկու րոպեով այցելել ես, ապա քեզ պետք է անպայման սուրճով հյուրասիրեին և այն եփելիս էլ ողջ տունը բռնվում էր հիանալի բույրով: Եվ մեկ օրինաչափություն ևս. ինչքան սուրճ եփող կա, այնքան էլ սուրճի համ կա: Եվ անգամ մայրն ու աղջիկը նույն որակի սուրճ չէին եփում, ուր մնաց հարսը: Ամեն ընտանիք իր լավագույն սուրճ եփողն ուներ. «Մեր սուրճը Քրիստինե մայրիկն է եփում», «Իսկ մեր սուրճ եփողը Համբիկն է»: Նույնն է մինչև այսօր հայոց տներում և կամ թե հիմնարկներում, սուրճ թեև բոլորն են եփում, սակայն միայն մեկի մոտ է լավ ստացվում: Հայրենադարձները, էլի որպես օրենք, պետք է խմեին առանց շաքարի, և որպեսզի հյուրի բերանը շատ չդառնանա, հետը քաղցրավենիք էին հյուրասիրում: Քրիստինե մայրիկները նաև մեծ վարպետներ էին թխվածք պատրաստելու գործում. հիշում եք դեռ երեկ մեր ծանոթ հայրենադարձների տանը կերած փահլավան, շաքար-լոխումը կամ ղադեիֆը, գազարով պյուրեկի համը: Ի՞նչ բարձր արվեստ խոհարարության: Եվ եթե, ինչպես ասացի,

հյուր էին եկել, դիցուք, Քրիստինե մայրիկի խնամիները, ապա նրանք ճաշի պիտի մնային, և Քրիստինե մայրիկը իր եղիսաբեթ աղջկա օգնությամբ պետք է պատրաստեին չիֆ-քյուֆթա, իմամ-բայադլի, աջաբ-սանդալ, գառնե-յարեխ և էլի նման կախարդական անուններով ուրիշ կերակրատեսակներ, որոնց պատրաստման գաղտնիքը նրանք իրենց կարի մեքենայի, ջազվեի ու անգլիական արդուկի հետ բերել էին այն երկրից...

Հապա պոլսահայի սարքած բաստուրմա՞ն... Շիլաչիում, Նար-Դոսի փողոցում բնակվում էր նշանավոր Յուսուփ աղան: Նա սիրում էր հանգստի պահին ոտքերը ծալած ծունկերով դուրսը նստել, դրա համար նա վաստակել էր Ծալապատիկ մականունը: Ծալապատիկ Յուսուփ աղան երևանյան առաջին ու անգերազանցելի բաստուրմաջին էր: Նրա հարևանությամբ էր ապրում Պոլսից դեռևս 20-ականների վերջին գաղթած Նշանը: Օ՜, Նշանը... Այդ նրա երևակայությամբ էր մայրը վերարկուի աստառի ներսի կողմից երեք շարք բռնակներ կարել, որոնց վրա նա հաջողությամբ կախ էր տալիս առանձին-առանձին կտրված բաստուրմայի կտորները և ապա վերարկուն պինդ կոճկած գնում իր գործավայրը՝ Շիլաչիի կոլխոզ-շուկան, հիմնական մուտքի մոտ, և երբ կտեսներ շուկա եկած բարեկեցիկ հագնված կին կամ տղամարդ, դավադրաբար կանցներ նրանց մոտով և կամացուկ կարտաբերեր. «Բաստուրմա կա...»: Ու եթե վերջիններիս հետաքրքրեր նրա առաջարկը, ապա կբացեր վերարկուի փեշերը և ցույց կտար աստառի վրա կոկիկ-կոկիկ կախված բաստուրմայի կտորները, որոնցից յուրաքանչյուրի քաշը նա գիտեր անգիր և ճիշտ ու ճիշտ կասեր, առանց նույնիսկ 10 գրամի տարբերության: Գնորդներից շատերը Նշանին արդեն գիտեին, և անխոս կատարում էին իրենց գնումը, իսկ նորերը մի՞թե չէին զարմանում՝ հանձին Նշանի հանդիպելով հայ առաջին կոմիվոյաժորին...

«Բաստուրմա կա...»,- կամացուկ ասում էր Նշանը ու անց կենում, ու երբեք չէր նայում պոտենցիալ գնորդի դեմքին, նա պարզապես շուկայում ձեմում էր, իր դերը կատարելով: Նա իր գործը մշակել, հասցրել էր արվեստի աստիճանի. ո՛չ պարտադրում էր, ո՛չ համոզում, պարզապես հետաքրքրություն էր առաջ բերում, իսկ մնացածն արվում էր ժանրի բոլոր կանոններով: Նշանը գիտեր, որ ինքը պարտավոր է օրվա ընտրած կտորները վաճառել, քանզի դրան սպասում էր ոչ միայն իր ընտանիքը,

այլև իր թաղի նշանավոր բաստուրմաջիները՝ Յուսուփ աղան, Շավարշ եղբայրը, Բաստուրմա Արամը, որոնցից վերցնում էր իր ծախելիքը: Թեև շուկայի այն տեսուչներին, որոնք կոչված էին «տակից» առևտրի դեմ պայքարելու, Նշանն էն գլխից «նայած» էր լինում, բայց միշտ ներքին վախ ուներ, թե իրեն կարող է մի նորելուկ ֆինտեսուչ բռնել կամ իր պոտենցիալ գնորդների մեջ կարող է ծպտված ներքին գործերի աշխատակից լինել: Այ, այն ժամանակ Նշանը կարող էր մեկ վայրկյանում կորցնել իր վերարկուի ողջ պարունակությունը... Բայց, դե, ներքին մի զգացողություն ուներ «բռնող» մարդկանց հանդեպ, ու նրանց կողքից անձայն էր անցնում, ինչպես մնջախաղի արտիստը...

Մեր հրաշագործ եկվոր խոհարարների արտադրանքը հիմնականում տնից էր վաճառվում, մարդիկ հասցեն էին իրար տալիս, քանզի այն տարիներին տանը հեռախոս միայն ընտրյալներն ունեին, գնորդները տուն էին գնում այս կամ այն ծանոթի միջնորդությամբ: «Շավարշ եղբայրը տա՞նն է, ինձ տիկին Վերժինեն է ուղարկել»: «Օ, հրամմեք, հրամմեք»,- ներս կկանչի Շավարշի կինը տիկին Եղիսաբեթին: «Սուրճ մը կառնի՞ք»: «Մերսի, մերսի»,- կլիներ տիկնոջ պատասխանը: Ապա տիկնոջը կուղեկցեին ներքին սենյակը, ուր մի հին փայտյա ճամպրուկի մեջ կոկիկ դարսված էին բաստուրմայի կտորները, և որպես օրենք, ամեն կտորի վրա դրված էին մեկ-երկու շերտ բարակ-բարակ կտրված համտեսի նմուշները:

Շավարշ եղբայրը և Ծալապատիկ Յուսուփ աղան թեև հին ընկերներ էին դեռևս Թուրքիայից, բայց մեր տակավին ստալինյան ժամանակի երևանում մրցակիցներ էին բոլոր կողմերով՝ թե՛ բաստուրմայի վաճառքի, թե՛ նարդու սեղանի շուրջ, թե՛ իրենց սարքած բաստուրմայի որակով և թե՛ անգամ րախի խմելու ձևով: Յուսուփ աղան քչակեր էր, բոյով, նիհարավուն, բայց ջլուտ և քչախոս, սիրում էր օղի, բաստուրմա և ծխախոտ: Շավարշ աղբարը խոշորամարմին, բավական գեր, սիրում էր օղի, բաստուրմա և ծխախոտ: Բայց և շատ էին սիրում իրար հետ նարդի խաղալ և պարծենալ այդ խաղի իրենց արվեստով: Բնականաբար զառերը նետելիս բերած թվերի անունները թուրքերեն էին ասում, սակայն, որպես օրենք, խոսում էին հայերեն, Պոլսի գեղեցիկ բարբառով, որն այսօրվա Երևանում արդեն շուրջ քսան տարի է ոչ մի տեղ չես լսի:

Արեշում կային դրկից փահլավա ու ղադեիֆ պատրաստողներ՝ Աբ-

րահամն ու Շնորհքը, նրանց պետք էր այցելել նախօրոք և պատվեր տալ: Փահլավա առնողը գիտեր, որ տված փողով տոնական սեղանին իսկապես բարձրարվեստ մի քաղցրավենիք կդրվի: Նրանց փահլավան համարյա նույնն էր, սակայն մեղրն ու ընկույզը առնում էին տարբեր տեղերից և դրա համար էլ տարբեր էին թխվածքի համերը, մեկը մի քիչ ավելի չոր էր, մյուսը՝ ավելի փափուկ, բայց երկուսն էլ կատարյալ էին: Եվ ինչպես ասացի, այդ փահլավան առնողը միայն կշահեր:

Մեր «ախպարների» մեջ կային, այսինքն՝ ոչ թե կային, այլ համարյա բոլորը հիանալի արհեստավորներ էին՝ կոշկակար, դերձակ, ոսկերիչ, վարսավիր, խոհարար, ավտո դզող-փչող, ներկարար: Բայց կային աշխատանքներ, որ էն գլխից մեր ախպարներին չէին տրվում, իսկ ավելի ճիշտ՝ չէին վստահում, օրինակ՝ միլիցիոներ, դատավոր, կոնվոիր, մաքսային աշխատող, ֆինտեսուչ...

Սարի թաղում էր ապրում Երևանում բոլորից լավ տղամարդու «դվուխբորտնի» կոստյում կարող վարպետ Մարտիրոսը: Մարտիրոսը նաև երգում էր Օպերայի երգչախմբում, իսկ կիրակի և տոն օրերը՝ Էջմիածնի տաճարի երգչախմբում, որն այն տարիներին ղեկավարում էր բեյրութահայ խմբավար Հրանտ Գևորգյանը: Լայնաթիկունք, բարձրահասակ, միշտ կոկիկ խնամած, լայն բեղերով, նա ավելի շատ նման էր սիցիլիական մաֆիայի կնքահոր, քան թե դերձակի: Ինքն էլ միշտ հագնում էր «դվուխբորտնի» կոստյում, մուգ գույների: Զարմանալի է. սովորական կոստյում կարելը նրա մոտ այնքան լավ չէր ստացվում, ինչքան «դվուխբորտնին»: Այժմ, ավաղ, չկան և այն մարդիկ մեր քաղաքում, որոնց համար վարպետ Մարտիրոսը հատուկ կարում էր իր «դվուխբորտնի» կոստյումները, թվարկում եմ գիտցածս չափով՝ Խորեն Աբրահամյան, լուսանկարիչ Սամվել Խանդիկյան, Արման Կոթիկյան, Վիգեն Իսահակյան, կինոռեժիսոր Արշավիրը, դերասան Նորիկը, գիմնաստ Կառլոսը, «Արմենիա» ռեստորանի բուֆետապան Բոյով Ռուբիկը, գյուղշիննախարար Գառնիկ Թադևոսյանը և ուրիշներ: Այս մարդկանցից յուրաքանչյուրը ուներ իր ոճը, իր դեմքը, և իհարկե, քիչ դեր չէին խաղացել նրանց համար վարպետ Մարտիրոսի կարած կոստյումները:

Ընդհանրապես տղամարդու կոստյում կարելու ողջ «ինդուստրիան» գտնվում էր մեր «ախպար» վարպետների ձեռքում, այժմ էլ հիշեմ այդ «ասեղի հրաշագործների» անունները՝ վարպետ Նշան, եղբայրներ՝

վարպետ Անդրանիկ, վարպետ Հովսեփ, Անդրե (ֆրանսահայ), Սովմինի ատելյեի գլխավոր դերձակ Ներսեսը, երևանյան «Դոմ մոդ»-ի նկարիչ-ձևարար Բենիկը, Ջոնը Մարսելից, լավագույն շալվար կարող Լևոնը («Հայկինոյից») և, իհարկե, Կարո Տոնիկյանը: Կարո Տոնիկյանը Արտեմի Այվազյանի հայ առաջին ջազային նվագախմբի (որը Ագիտպրոպի վերակացուների «թեթև ձեռքով» վերանվանվել էր էստրադային նվագախումբ) հիմնական երգիչ-մենակատարն էր՝ բարձրահասակ, սպորտային կազմվածքով, գեղեցիկ դեմքով, սուր բեղերով, լայն ժպիտով հիշեցնում էր լատինամերիկյան ֆիլմերի հերոսներին, Ռոման Նավառոյի տիպի, ռուսները լավ խոսք ունեն՝ «սերդցեեդ», այսինքն՝ սրտակեր հերոսի: Ավելորդ է ասել, որ Կարոն միշտ լավ էր հագնված, քանզի ինքն էր իր կոստյումները կարում, և երեք հիմնական զբաղմունք ուներ, երեք կոչում՝ երգել էստրադային բեմահարթակից Արտեմի Այվազյանի նոր երգերը, կարել կոստյումներ 1947-48 թթ. ներգաղթածների բերած կտորներով, և կանանց սրտեր գրավել: Այս վերջին գործը նրա իսկական կոչումն էր, և պետք է ասել, որ այս բնագավառում նա մեծ հաջողություն ուներ Երևան ժամանած ռուս վայելչատես զբոսաշրջուհիների շրջանից մինչև Անժելիկա Մալխասյան: Այդ Կարո Տոնիկյանի տաղանդի շնորհիվ է, որ մեր սերնդակիցների ականջում մինչև օրս հնչում է «Կարինե, Կարինե» կամ «Գյուլնարա» երգերը: «Կարինե» երգում, եթե չեմ սխալվում, կային այսպիսի տողեր. «Մեր երկրում ազատ, ուրախ, / Ուր գարունն է միշտ բուրում, / Դու ծաղկել ես շողշողուն, Կարինե, / Իմ երկրի քնքուշ ծաղիկ»: Երգի խոսքերի հեղինակը պարսկահայ տաղանդավոր արձակագիր Հովհաննես Ղուկասյանն էր: Եվ նրա գրած տողը՝ «Մեր երկրում ազատ, ուրախ», Կարոն հաճախ երգում էր «ազատ, անկախ», ինչը այդ տարիների համար համարձակ քայլ էր: Այնպես որ Կարոն նախընտրել էր այդ տարիներին շատ-քիչ օգտագործվող ազգային «թեքում» ունեցող «անկախ» բառը: Այսօրվա պես հիշում եմ լույսերի մեջ ողողված Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճի բեմը, Արտեմի Այվազյանը խմբավարի տեղում, Ռոբերտ Յոլչյանը՝ վիրտուոզ թմբկահարը, մեր մյուս հրաշալի ջազիստները, որոնց թվում շատ էին և հայրենադարձները, և վերջապես ծափերի ներքո բեմ է մտնում Կարո Տոնիկյանը իր անգերազանցելի ժպիտով, և սկսվում է տոնը... Տոնը, որ այնքան հազվադեպ էր ստալինյան շրջանի մեր համայնական երկրում... Կարոն, որպես դերձակ, իհար-

կե չէր գերազանցի վարպետ Նշանին, կամ թե Անդրանիկ և Հովսեփ եղբայրներին: Բայց գամ հերթով. վարպետ Նշանը գրանդ մաստեր էր, լռակյաց, շատ կիրթ, համարյա լուռ կանցկացներ հագուստի «պրիմերկաները» (փորձերը), կժպտար միայն գործի վերջում, անթերի էր աշխատում: Իմ բախտը բերել էր. երբ ավարտում էի Չայկովսկու անվան երաժշտական տասնամյակը, հայրս ինձ նվեր արավ՝ պատվիրելով Պարսկաստանից վերջին գաղթածների մոտից առած մի գեղեցիկ կտորից կոստյում, իսկ մինչ այդ մի կոստյում էլ իր համար էր պատվիրել: Նշանի կարածը բառիս բուն իմաստով անթերի էր, նման կար կարող էին ունենալ միայն Փարիզի ամենաշքեղ նորաձևության տները, իսկ մեր Վարպետ Նշանը աշխատում էր 90 ռուբլի աշխատավարձով, Օպերայի դիմացի մի համեստ ատելյեում: Համեմատելու համար ասեմ, որ սա նույնն էր, եթե Մարիո դել Մոնակոն երգեր երևանյան Օպերայում, ուր, իմիջիայլոց, հաջողությամբ երգում էր մեր լավագույն երգիչներից մեկը՝ Միհրան Երկաթը, էլ չեմ ասում անզուգական Գոհար Գասպարյանի մասին. դա արդեն ուրիշ թեմա է:

Անդրանիկ և Հովսեփ եղբայրներն ապրում էին Մալաթիայի շուկայի դիմաց: Երկուսն էլ տաղանդավոր դերձակներ էին: Մի հայր ունեին 90 տարեկան, առավոտ բերում էին, նստեցնում շքամուտքի թախտին և երեկոյան տանում քնելու: Հայրիկը նստում էր ծալապատիկ և օրը մի տասը բաժակ սուրճ կխմեր և նաև մի մատնոց օղի: Վարպետ Անդրանիկը կասեր. «Ով կըսե, թե այս երկիրը առաջ չէ քայլեր, համա գծերն են սխալ ուղղությամբ գցած...»:

Ֆրանսահայ Անդրե Թրյանցը ամենաերիտասարդն էր թվարկածս վարպետներից և շատ տաղանդավոր: Պատահական չէ, որ վերջին տարիներին նա էր կարում կոստյումները մեծն Մարտիրոս Սարյանի: Անդրեենք ապրում էին Բաղրամյանի վերին մասի նրբանցքներից մեկում, ընտանիքով 1949-ին աքսորված էին եղել Ուրալ, ետ եկած Հայաստան 1955 թվին, և հազիվ կառուցած իրենց քոլիկը, 1972 թվին ետ գնացին Ֆրանսիա: «...Ուրալյան ցուրտը դեռ ոսկորներիս մեջ է, վախենում եմ մի օր նորից զգամ»,- ասում էր Անդրեի հայրը, և ճամպրուկները հավաքեցին, երբ եղավ գնալու առաջին հնարավորությունը: Ով իրավունք ուներ աքսորի «տելնյաշկա» հագած մարդուն խրատ տալ...

Հայ ոսկերիչներին հիշատակելիս կուզեի առանձնացնել եգիպտա-

հայ վարպետ Ժիրայր Չուլոյանի անունը: Նա մոտ 40 տարի եղել է Վազգեն Ա կաթողիկոսի պատվերները կատարող ոսկերիչը և արծաթագործը: Այդ նա է կերտել ոսկուց և թանկարժեք քարերից Հայոց այբուբենի ստելան և ոսկյա մեծադիր Սուրբ խաչը, որոնք պահվում են Էջմիածնի Մայր աթոռի թանգարանում և ցուցադրվում են անվանի հյուրերին: Իսկ նրա ստեղծած «Սիրամարգը» ոսկյա մանրակերտ քանդակը նվեր է ուղարկվել Անգլիայի եղիսաբեթ Երկրորդ թագուհուն:

Երևանը միշտ աչքի է ընկել իր ոսկերիչ «ախպարներով», և դրանց մեջ, իհարկե, բառիս բուն իմաստով կային արվեստագետ-վարպետներ՝ Արամ Կյուրեղյանը, Ժիրայր Չուլոյանը, Ժորժը՝ Մոնտե Քրիստո մականունով, Բաբկենը, Արտաշեսը, Վարդանը, Հարութը: Նրանց մեջ իր բարձր արվեստով աչքի էր ընկնում Փարիզից եկած Արամ Կյուրեղյանը՝ մի շատ կիրթ ու զուսպ մարդ: Այդ նա էր 1949 թվականին, Ստալինի ծննդյան 70-ամյակի առթիվ, ոսկուց և թանկագին քարերից ստեղծել երկրագնդի փոքր մոդելը, որը ներքին մեխանիզմով հնչեցնում էր ՍՍՀՄ օրհներգը: Այդ հրաշքը ես տեսել եմ մինչև Մոսկվա ուղարկելը, Պետական պատկերասրահի դահլիճում: Սակայն այս հանգամանքը չօգնեց, որ հետագա տարիներին, մի անհեթեթ մեղադրանքով Կյուրեղյանին չձերբակալեին, և եթե չլիներ Մարտիրոս Սարյանի միջամտությունը, Արամին հավանական է Սիբիր աքսորեին:

Եթե Աբովյան փողոցով իջնեիր ցած, մինչև հրապարակ, ապա կանցնեիր հայ ոսկերչական մի յուրահատուկ համքարության միջով: Չվարթ, կատակասեր, գործի հրաշալի գիտակ, այդ նրանք մի քանի սերունդ հայ հարսների, ինչպես և որոշ տնտեսական հաջողության հասած տիկնանց սովետական 593 պրոբի ոսկով, պարգևեցին այնպիսի զարդեր, որ ոչնչով չէին զիջի «Կարտիերին» կամ «Գուչչիին»: Հետո Աբովյան փողոցի վրա գտնվող արհեստանոցներից նրանց որոշեցին հավաքվել Մարքսի փողոցի նախկին բաղնիքի շենքում, որն այսօր ոսկու հայտնի տոնավաճառ է, և մեր երբեմնի ինքնուս կարտիերների փոխարեն աշխատում են ոսկյա իրերի վերավաճառողները, իսկ մեր նախկին երևանյան ոսկերիչ «ախպարները» Լոս Անջելեսում են, Սան Ֆրանցիսկոյում, Փարիզում, Լոնդոնում ու էլի աշխարհի տարբեր վայրերում: Իսկ Արամ Կյուրեղյանը, որ մինչև Հայաստան գալը ուներ ոսկերչական խանութ

Փարիզի Շանզէլիզեում, հայաստանյան ոդիսականից հետո, 1980-ականներին կրկին վերաբացել էր այդ խանութը:

...«Արմենիա» հյուրանոց. քանի որ նրա անմրցելի տնօրեն Իլյա Կևորկովը լավ էր հասկացել, որ «Ինտուրիստի» ճաշարանում պիտի աշխատեն օտար լեզուներ իմացող մատուցողներ, նա այս սկզբունքով հավաքել էր սպասարկման գործի փայլուն մասնագետ հայրենադարձների մի բրիգադ՝ ռեստորանի մետրը՝ պարսկահայ Սոկրատը, մատուցողներ Մացոն, Հովնանը, Աբրահամը, Անդրեն, Միսակը, շեֆ խոհարարներ Մայիսը, Խաչիկը, բուֆետապան Բոյով Ռուբիկը, առաջին հարկի բարմեն Եսային, կաֆեի բարմենուհի գեղեցկուհի Անահիտը: Այդ մարդիկ աշխատում էին լավ գործող շվեյցարական ժամացույցի պես. բոլոր սեղաններին մաքուր, ձերմակ սփռոցներ, փայլում էին բաժակները, սպասքը: Սիրալիր ընդունում էին պատվերը, ձախ ձեռքին գցած ձերմակ երկարավուն անձեռոցիկի հարևանությամբ բռնած բլոկնոտում գրառում էին պատվերները, ոնց որ պետպլանի կարևոր առաջադրանք... Նրանք սիրալիր զրուցում էին, կատակում չափով և բավական արագ մատուցում: Եվ պատահական չէ, որ հաճախորդները ուզում էին նստել Մացոյի կամ Հովնանի մոտ, իսկ «Արմենիայի» երկրորդ հարկի ռեստորանի հաճախորդներն էին Հրաչյա Ներսիսյանը, Երվանդ Քոչարը, Վիգեն Իսահակյանը, բեմադրիչ Գրիգոր Մկրտչյանը, դերասաններ Խորեն Աբրահամյանը, Հովհաննես Ավագյանը, Գենը, Շահում Ղազարյանը, Վ. Մարգունին, Միեր Մկրտչյանը, գրողներից Հովհաննես Շիրազը, Խաչիկ Դաշտենցը, Կոստան Զարյանը, Արարատ Բարսեղյանը, Կայծունին, ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանը, պրոֆեսորներ Վազգեն Գևորգյանը, Հովհաննես Ճուղուրյանը, Միքայել Զավարյանը, և նրանց մշտական սեղանակիցներ գնդապետ Վրույրը, ժողկրթբաժվարիչ Հակոբը, ֆիզիկոս Համլետը, Արշակունին, Մոպրի Ցագոյի տղա Ռոբերտը, հետագայում ուշագրավ գրքերի հեղինակ Երջանիկ Կարախանյանը:

«Արմենիա» հաճախելը ռիտուալ էր: Այստեղ միակ տեղն էր, ուր մեր երևանյան բոհեմի մտավորականները կարող էին շփվել արտասահմանցիների և կամ սփյուռքահայերի հետ: Այդ թվում էին զբոսաշրջիկներ, որոնց հետ մերոնք պարզապես ծանոթացել էին հենց ռեստորանի սրահում, ինչպես նաև քիչ թե շատ հենց Սփյուռքում մշակույթի հետ կապ ունեցող մարդիկ, որոնք իրենք էին մոտենում մեր բոհեմի սեղանին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վարդան Դևրիկյան
«ԵՐԹԱԼՈՒ» ՀԱՐՑԸ ԵՐԲ ՎԵՐԱԾՎՈՒՄ Է ՄՆԱԼՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ 3

ՄԵՐ «ԱԽՊԱՐՆԵՐԸ» 6
«ԵՐԹԱԼԸ ԶԻ՞ՇՏ Է....» 28

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՄԵՐ «ԱԽՊԱՐՆԵՐԸ» ԿԱՄ ԵՐԹԱԼԸ ԱՃՈՂՏ Է...

Խմբագիր՝ Վարդան Դևրիկյան
Հրատարակչական խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Ձևավորումը՝ Արմինե Քոչարյանի

Չափսը՝ 60x84 1/16
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ² 1.3 ծ.կ.
Ծավալը՝ 5.25 տպ. մամուլ
Տառատեսակը՝ Ghabuzian Tigran
Տպաքանակը՝ 200
Գինը պայմանագրային

Տպագրվել է «Նովել» հրատարակչության տպարանում
Հասցե՝ ք. Երևան, Մայիսի 9 փ., 23

ԱՐՄԱՎ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

издательство **АРМАВ**

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.
հեռ.՝ 34-73-35
էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.
тел.՝ +374-10-34-73-35
Email: armav-hrat@mail.ru